ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. հուլիսի 2 թիվ 66 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանով հաստատված կարգի 20-րդ կետի պահանջները **կարգադրում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության <<Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Մկրտչյանին՝

1) Ստեղծել <<Բնագիտություն>>, << Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Օտար լեզու>>, <<Հայոց պատմություն>> առարկաներից վերաքննությունների ընդունման հանձնաժողովներ և 2012 թվականի հուլիսի 2-8-ը ընկած ժամանակահատվածում անցկացնել վերաքննություններ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ